ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտի 2020 թվականի N 47 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԹԵԼՄԱՆ ՆԱԶԱՐԵԹԻ ՄԱՆԴԱԼՅԱՆԻՆ, ԱՐՏՈՒՇ ԹԵԼՄԱՆԻ ՄԱՆԴԱԼՅԱՆԻՆ, ԱԶՆԻՎ ՄԻՍԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, ՖԱՅԵՆ ԱՐՏՈՒՇԻ ՄԱՆԴԱԼՅԱՆԻՆ, ԱՐՍԵՆ ԱՐՏՈՒՇԻ ՄԱՆԴԱԼՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՐԻՆԿԱ ԱՐՏՈՒՇԻ ՄԱՆԴԱԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-106-0010-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԼՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով, 48-րդ կետով և հիմք ընդունելով Թելման Նազարեթի Մանդալյանի 2020 թվականի մարտի 11-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ**.

քաղաքացիներ Թելման Նազարեթի Մանդալյանին, Արտուշ Թելմանի Մանդալյանին, Ազնիվ Միսակի Պետրոսյանին, Ֆայեն Արտուշի Մանդալյանին, Արսեն Արտուշի Մանդալյանին և Վարինկա Արտուշի Մանդալյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետութուն, Շիրակի մարզ, գյուղ Սիզավետ, 6-րդ փողոց, բնակելի տուն 9 հասցեում գտնվող 08-106-0010-0016 կադաստրային ծածկագրով հողամասին և բնակելի տանը /գրանցված՝ վկայական N 11032020-08-0005/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետութուն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Սիզավետ, 6-րդ փողոց, թիվ 9:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի մարտի 11
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտի 2020 թվականի N 48 - Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿԱՄՈ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 64-Ն որոշման հավելված 1-ի 7-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի «ա» պարբերության, ***որոշում եմ.***

Անհատ ձեռնարկատեր Կամո Հարությունյանին (ՀՎՀՀ՝ 57314379, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 63.912758/2016-06-09, իրավաբանական հասցեն՝ գյուղ Փոքր Սեպասար փողոց 1, 24, ընդհանուր մակերեսը՝ 20 քառակուսի մետր) 2020 թվականի 2-րդ եռամսյակի համար տալ ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի մարտի 11
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2020 թվականի N 49-Ա

ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇՈՑՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածով, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «ե», «զ» կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2020 թվականի մարտի 13-ի N108-Ա որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետը, ***որոշում եմ***.

1. Աշոցք համայնքում կորոնավիրուսի տարածման դեմ պայքարի կազմակերպման և բնակչության պաշտպանության ապահովման նպատակով ստեղծել Աշոցքի համայնքային օպերատիվ շտաբ (այսուհետ՝ Օպերատիվ շտաբ)՝ համաձայն N1 հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Օպերատիվ շտաբի անդամների իրազեկման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի մարտի 16
գյուղ Աշոցք

Հավելված N 1
ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի
ղեկավարի 2020 թվականի
մարտի 16-ի N49-Ա որոշման

ԱՇՈՑՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲ

1. Կարեն Մանուկյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար, Օպերատիվ շտաբի պետ,
2. Կարեն Աբրեյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի տեղակալ, Օպերատիվ շտաբի պետի տեղակալ,
3. Վահագն Դանիելյան-Աշոցքի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար, Օպերատիվ շտաբի անդամ,
4. Մկրտիչ Մկրտչյան- Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Աշոցքի բաժնի օպեր-լիազոր, Օպերատիվ շտաբի անդամ,
5. Նոսոյան Ալեքսան- Հայաստանի Հանրապետության ոստիկանության Աշոցքի բաժնի պետի տեղակալ, Օպերատիվ շտաբի անդամ,
6. Առուստամյան Հրայր- «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցի բժիշկ, Օպերատիվ շտաբի անդամ,
7. Մարգարյան Գևորգ- Շիրակի մարզի զինվորական կոմիսարիատի Աշոցքի բաժանմունքի աշխատակից, Օպերատիվ շտաբի անդամ,
8. Գաբրիելյան Ալեքսան- Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնի աշխատակից, Օպերատիվ շտաբի անդամ,
9. Գոհար Խաչատրյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, Օպերատիվ շտաբի անդամ,
10. Գևորգ Հովհաննիսյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ, Օպերատիվ շտաբի անդամ,
11. Կարապետ Հակոբյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ, Օպերատիվ շտաբի անդամ,
12. Տիգրան Հակոբյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի օգնական, Օպերատիվ շտաբի անդամ,
13. Նաիրա Հարությունյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ, Օպերատիվ շտաբի անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտի 2020 թվականի N 50-Ա

ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի N 1460 հրամանը՝ Աշոցք համայնքի բնակչության պաշտպանության համակարգի արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ***որոշում եմ.***

1. Հաստատել Աշոցք համայնքի.

1) Աշոցք համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020թ. մարտի 18
գյուղ Աշոցք

Հավելված N 1
ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի
ղեկավարի 2020 թվականի մարտի
18-ի N 50-Ա որոշման

ԿԱԶՄ

ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1. Խորհրդի ղեկավար՝ Կարեն Մանուկյան (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար),
2. Խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Կարեն Աբրեյան (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի տեղակալ) ,
3. Խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Գոհար Խաչատրյան (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար),
4. Խորհրդի անդամներ՝
   1) Արմեն Մարտիրոսյան (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու անդամ),
   2) Միշա Երանոսյան(Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու անդամ),

3) բնակավայրերի վարչական ղեկավարներ՝
ա. Սարագյուղ բնակավայրի վարչական ղեկավար՝ Ալեքսան Իգիթյան,
բ. Բավրա բնակավայրի վարչական ղեկավար՝ Պավլիկ Սումբուլյան,
գ. Թավշուտ բնակավայրի վարչական ղեկավար՝ Իգիթ Առաքելյան,
դ. Սիզավետ բնակավայրի վարչական ղեկավար՝ Հենրիկ Պողոսյան,
ե. Ղազանչի բնակավայրի վարչական ղեկավար՝ Լուսինե Սիմավոնյան
զ. Մեծ Սեպասար բնակավայրի վարչական ղեկավար՝ Նորայր Պողոսյան,
է. Փոքր Սեպասար բնակավայրի վարչական ղեկավար՝ Իսկուհի Սարուխանյան,
ը. Կրասար բնակավայրի վարչական ղեկավար՝ Գեղամ Գևորգյան,
թ. Զույգաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար՝ Ավետիք Ամիրյան,
ժ. Կարմրավան բնակավայրի վարչական ղեկավար՝ Ալինա Կարապետյան,
4) ոլորտային պատասխանատուներ՝
ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Վահագն Դանիելյան-Աշոցքի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար (համաձայնությամբ),
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Ալեքսան Նոսոյան-Ոստիկանության Աշոցքի բաժնի պետի տեղակալ (համաձայնությամբ),

գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Արմեն Կարապետյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի վարորդ,
դ. կապի պատասխանատու՝ Գեղամ Համբարձումյան- «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի Աշոցքիի տեղամասի ճարտարագետ (համաձայնությամբ),
ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Հրայր Առուստամյան- Աշոցքի «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցի բժիշկ,
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Տիգրան Հակոբյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի օգնական,
է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Ահարոն Նիկողոսյան «ՀԷՑ» ՓԲԸ «Ղարս» մասնաճյուղի «Աշոցք» էլեկտրացանցի ճարտարագետ (համաձայնությամբ),
ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Կարապետ Հակոբյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ,
թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Կարեն Մովսիսյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի տնտեսվար,
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Գևորգ Հովհաննիսյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ:

Հավելված N 2
ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի
ղեկավարի 2020 թվականի մարտի
18-ի N 50-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ
ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Աշոցք համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Աշոցք համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

3. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացնումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) վարժանքների կազմակերպումը և անցկացնումը

14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

4. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,

16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին: